Սևան համայնքի / ք. Սևան,գ. Գագարին/ 2021թվականի բյուջեն կատարվել է 102.7%-ով

Սևան համայնքի ավագանու նիստում ներկայացվեց Սևան համայնքի / ք. Սևան,գ. Գագարին/ 2021թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդագրություն-հաշվետվությունը, համաձայն որի՝ 2021թ. տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 102.7%-ով: 998.1մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 1025.1մլն. դրամ, գերակատարումը կազմել է 27.0մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 32.0մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը 5,0մլն. դրամ է:

2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 22.3%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 186,6մլն. դրամ:

2021թ. տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել 104.3%-ով /պլան՝ 742.2մլն. դրամ, փաստացի՝ 774.2մլն. դրամ /: 2020թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 101.7մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2020թ. համեմատությամբ ավելացել են 15.1%-ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 113.6%-ով / պլան՝ 236.1մլն. դրամ, փաստացի՝ 268.1մլն. դրամ /: Նախորդ՝ 2020թ.. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները գերակատարվել են 10.8%-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը ավելացել է 22.4մլն. դրամով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ գերակատարվել են փոխադրամիջոցների գույքահարկը 49,5մլն. դրամ /61,1%/, պետական տուրքերը՝ 0.4մլն. դրամ /5.3%/, ոչ հարկային եկամուտները՝ 6.4մլն. դրամ /8.3%/, թերակատարվել են շինությունների գույքահարկը՝ 15.4մլն. դրամ /55.4%/, տեղական տուրքերը՝ 0.9մլն. դրամ /11.3%/, հողի հարկը գերակատարվել է՝ 0.3մլն. դրամ /5.5%/:

2021թ. ընթացքում սեփական եկամուտների պլանը ըստ առանձին եկամտատեսակների գերակատարվել է ընդհանուր 22.4 մլն. դրամի չափով, իսկ թերակատարումը կազմել է ընդհանուր 16.3մլն. դրամ:

Թերակատարումների հիմնական պատճառը բնակչության և իրավաբանական անձանց վճարումների մակարդակի նվազումն է, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքեր:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 98.7%-ով /ճշտված պլան՝ 395.8մլն. դրամ, փաստացի՝ 390.7մլն. դրամ/: Նախորդ՝ 2020թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտներն ավելացել են ընդամենը 160.7մլն. դրամով կամ 69.9%-ով: Նման գերակատարումը պայմանավորված է 2021թ.-ին պետական բյուջեից հատկացված 29.9մլն. դրամ ավել սուբվենցիայով:

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2021թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 97.4%-ով: 1030.4մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 1003.3մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 27.1մլն. դրամ, կամ 2.6%:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 99.3%-ով (պլան՝ 742.2մլն. դրամ, 736.8 մլն. դրամ փաստացի), թերակատարումը կազմել է5.4մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 43.3%-ը կամ 318.8մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 121.7մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները (136.5մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր /18.5%/:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 99.3% , մշակույթի ծախսերը՝ 97.3%:

2020թ. համեմատությամբ 2021թ.-ին վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 95.3մլն. դրամ կամ 14.9%-ի չափով:

2021թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 95.0%-ով (պլան՝ 428.0մլն. դրամ, փաստացի ծախս՝ 406.4մլն. դրամ): Նախորդ՝ 2020թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսերը կազմել են 39.3մլն. դրամ, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացել են 13.2%-ով:

Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը 139.8մլն. դրամի չափով ապահովվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից նույնքան դրամի չափով ֆոնդային բյուջե հատկացման հաշվին, կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 34.4%-ը ապահովվել է ոչ կապիտալ՝ ընթացիկ եկամուտների հաշվին:

Համայնքի 2021թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 372,7 մլն. դրամ /այդ թվում՝ 10,5 մլն. դրամի չափով նախորդ տարիների պարտք/ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար: 6,0 մլն. դրամի չափով կատարվել են փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծախսեր:

Իրականացվել է շուրջ 340,0 մլն. դրամի համայնքի ճանապարհների,բակային տարածքների ասֆալտապատման աշխատանք: 2 խոշոր ծրագրերի միջոցով համայնքային ներդրումը կազմել է շուրջ 148,0 մլն. դրամ:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքերը կազմել են 29.4մլն. դրամ, այդ թվում՝ 1,2 մլն. դրամ վարչական բյուջեի գծով, 28,2 մլն. դրամ ֆոնդային բյուջեի գծով:

Տարվա ընթացքում մարվել է վարչական բյուջեի գծով 1,2 մլն. դրամ պարտքը և ֆոնդային բյուջեի գծով 12,7 մլն. դրամ, որից՝ ասֆալտապատման գծով 10,5 մլն. դրամ պարտք: Ընդամենը պարտքի մարում 13,9 մլն. դրամ:

Նախորդ տարիներից 2021թ. տեղափոխված պարտքերի մնացորդը 01.01.2022թ.-ին կազմել է 15,5 մլն. դրամ, որից 15,0 մլն. դրամը ասֆալտապատման գծով 2016թ.-ից տեղափոխված պարտքն է:

2021թ.-ին առաջացած նոր պարտքը 19,2 մլն. դրամ է, որից՝ 11,3 մլն. դրամը դեռևս չտրամադրված սուբվենցիայի գումարն է:

Նախորդ տարիների և 2021թ.-ի պարտքերի մնացորդը միասին 01.01.2022թ. դրությամբ կազմել է 34,7 մլն. դրամ: